



# ԻՐԱԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ  
ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵՄՆ  
ՀԱՅՈՒ  
ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ

Կ ՏԵՐԻ  
  
հ-թ

1986



# ԱԼԻՆ

## ԱՄԱՍԱԳԻՐ

ԿՐՈՂԱԿԱՄ - ԳՐԱԿԱՄ - ԲԱԼԱԽԱԻՐԱԿԱՄ

ՊԱՐՏՈՎԱՐԵՐԻ ԿՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ

4. ՏՄՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

1986

ՅՈՒ ԼԻՍ - Օգոստ - Սեպտեմբեր



Թիւ 7-8-9

1986

July - August - September

No 7-8-9


# S I O N

VOL 60

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



203 - 98

*10285 870* St. James Press, Jerusalem

## ՓՈԽՈՅՆ ԽՄԲԵԴՔՄԱԿԱՆԻ

**ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ**

Է.

### **ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹԻՒՆ**

Եկեղեցական բարեկարգութեան վերաբերեալ հարցերուն շարդին՝ ամենէն ուշազրաւներէն մին է անշուշտ ռէզոգերականութեան կուսակրօնութեան հարցը, ինչպէս կը վերնազրէ զայն ԶԵԿՈՒՅՈՒԽՄը:

Ըստ ոմանց, եթէ կ'ուղէք՝ նոյնիսկ շատերու կարծիքով, ամենակարեւորն է ան. զի քիչ չեն անոնք որ չեն կրնար ըմբռնել եկեղեցական բարեկարգութիւն՝ առանց եկեղեց սկաններու կուսակրօնութեան խնդրին լուծում մը տալու. ու թերես սակ աւթիւ չեն նաև այնպիսիներ, որ Բարեկարգութիւն ըսկելով լոկ այդ հարցը կ'իմաստն, իսկ անոր լուծման միուկ կերպը կը նկատեն կուսակրօնութեան չնչումը, անզգալարար կամ ոչ՝ տարուած թերես այն մտածումէն թէ հաթօլիկ եկեղեցին դէմ բարեկարգութեան փոթորիկը շղթայագերծող գործիչն ակզրունքներէն մին ևս եղաւ այդ, որուն ինքն իսկ տուաւ առաջին օրինակը:

Մենք լուրջ չենք զտներ այդպէս յոխուան զդացումով նայիլ խնդրոյն վրայ, և ուրախ ենք որ ԶԵԿՈՒՅՈՒԽՄԻՆ մէջ ևս այդ մասին շատ լաւ կշռուած դասում մը կը տիրէ, որ, հեռու՝ ամբոխային տրամադրութիւններէ տարուելէ, հարցը իր էութեան և բնութեան մէջ նկատի կ'առնէ ճշգրիտ արդարամտութեամբ, հակիրճ տողերու՝ մէջ յստակօրէն մատնանշելով անոր ելքը, որո՛ւն կրնայ և պարտի յանդիլ ան:

Ըստնք նախ թէ խնդիրը՝ եկեղեցագիտական տեսակէտով՝ վարդապետական ըլլալէ աւելի և առաջ, կարգապահական է, հետեարար և բանաւոր է պատմական ճամբով մօտենալ անոր:

Ո՛չ այսօրուան հարց է ան և ո՛չ քանի մը դար առաջուան. կը կարծենք թէ մինչև քրիստոնէական կեանքի աղքիւրը՝ Աւետարանը՝ պէտք է վերանալ, անոր առաջին շարժումը դիտելու համար իր սահմին մէջ. Արդարն, «Ոչ ամեննենան բաւական են այլմ, այլ որոց տունալն է . . . որ կարօնի է տալիշ տարցի» (Մաթ. ԺԹ. 11-12) գծիոնն մէջ, որով մեր Տէրը եզրակացուց ամուսնական կեանքի բարդութեանց վերաբերմամբ Փարիսեցիներէն իրեն ուղղուած հարցումի մը իր պատասխանը՝ ակնարկութիւն մը կայ այդ խնդրոյն. առանց բնազրին բառերը հոս յառաջ բերելու, բաւականանա՞նք ըսկելով թէ անոնց իմաստն էր այս. բարձրօրէն զաղափարական նպատակի սիրոյն՝ սեռական կիրքը սանձահարելու բերումը անծանօթ զգացում մը չէ մարդկային սրտին. բայց առոր համար անհրաժեշտ է հոգեկան յօժարութիւն և հզօր կամք. այսինքն մարդս իր ազատութիւնը կը պահէ ամուսնութեան հանդէպ ես. թէկ բնական

և աստուածադիր վիճակ մըն է անհիշա, բայց հոգեկան շարժառիթներէ յորդոր-սա ած՝ ներելի է անոր զանցառութիւնը, զոհողութեան զիտակցութեամբ։ Անա-սարկելիօրէն ա'յս է աւետարանական ըմբռնումը կուսակրօնութեան նկատմամբ։

Նոյն այդ ըմբռնումն է որ, թերես աւելի հանգամանօրէն, կը պարզուի առաքելակոն դրականութեան մէջ։ Մէկ կողմէ առ 8իմոթէս և 8իտոս Թուղ-թերոն մէջ «Պուտ է Եպիսկոպոսին լինել միոյ կնոջ այր»ը (այսինքն անզամ մը միայն առունացած) կը հաստատէ այն իրողութիւնը թէ հոգեռականը (ե-պիսկոպոս կամ բանանայ) կրնան բնտանիք կազմել, և «Պատուական է ամուս-նութիւն եւ սուրբ՝ անկողինք»ը (Երր. ԺԴ. 4), «Էաւ է ամուսնանալ հան զծերուլու» (Ա. Կորն., է. 9), «Կանամբեացի պատուիթեմ» կենոց յառնէ մի՛ մեկնիլ եւ առն զլիին իւր մի՛ բողուլու»ը (Նոյն անդ՝ 10, 11), և գեռ ուրիշ համարներ նոյն զուտին մէջ։ Կը ցուցնեն ամուսնական կեանքի ունեցած բարձր նշանակութիւնը քրիստոնէակոն զիտակցութեան մէջ։ Միւս կողմէ նախ ընդհա-նուրին և յետոյ այրիներուն և ամուրիներուն ըսուիլը թէ «Էաւ է երէ հայցեն դիրել զիս» (Ա. Կորն., է. 8), և նոյն զուտին մէջ դարձեալ «Ու անկինն է հոգայ զծեառն, եւ որ կանամբին է հոգայ զաւիարեիս թէ ո՛րպէս հանոյ լիցի կենոջ իւրում» (անդ՝ 32, 33) խօսքերը կը ցուցնեն առաքեալին կողմէ չափով մը գէթ կուսութեան ընծայուած նախամեծարութիւնը, ու այս ամէ-նուն վրայ դարձեալ յայտարարելը թէ «Փրաքանչիւր ո՛ք զիւր շեորհս կալցի, ոմն այսպէս եւ ոմն այնպէս» (Ա. Կորն., է. 7), յանկարծակիի չի բերեր զմեզ բնաւ սքանչելի այն դայնմութեան մասին՝ որով մեծ առաքեալը կը յայտնէր իր մտածումը ամուսնութեան հանդէպ մարդկային ազատութեան վրայ։

Եկեղեցականներուն համար ամուսնական կեանքին հանդէպ՝ աղատ, իսկ կուսակրօնութեան նկատմամբ փոքր ինչ նախընտրական այս մտայնութիւնը շարունակուեցաւ քրիստոնէութեան թուականի առաջին դարերուն, կոյս կեանքի վերաբերմամբ համակրութիւնը զգալապէս աւելի շեշտուելով սակայն։ Այս համակրութիւնը նախ արտայայտուեցաւ կանամբի կեանքին դէմ սահմանա-դրուած սեղմումներով։ Առաքեալին «Ամիոյ կենոջ այր»ի սկզբունքը փորձուեցաւ ընդհանրացնել, թէկ ոչ յաջողութեամբ, աշխարհականներուն մէջ ևս։ Անկէց է անշուշտ Բ. և Գ. ամուսնութեանց հանդէպ խորշանքը, որոն հետքերը կը պահ-ուին զեռ կանոնազիրքին և Մաշտոցին մէջ։ «Ամիոյ կենոջ այր»ի այդ սկզբունքը յետոյ ուղուեցաւ այնպէս իմանալ որ երէցը կամ եպիսկոպոսը եթէ քրիստոն-եայ լինելէն կամ մկրտուելէն առաջ ամուսնացած և այրիացած էին, երէց կամ եպիսկոպոս ձեռնադրուելէն վերջ պիտի չկարենային ամուսնանալ։ Խըս-տութիւնը այդտեղ կանգ չառաւ սակայն։ ձգտում յայտնուեցաւ պահանջելու, և պահանջուեցաւ նոյնիսկ որ ամուսնացեալ եպիսկոպոսը լքէ իր կինը կամ առ նուազն անշատ ապրի անկէ։ Բայց հնար չէր մարդկային բնութեան ա'յնքան ընդակից վիճակ մը անձնական տեսութիւններով և երկրորդական ժողովներու մէջ որոճացուած որոշումներով չնշել քանդել։ Տերտուղիանոսի խօսքերէն կը հասկցուի թէ իր դարուն բազմաթիւ եպիսկոպոսներ կային, որոնք աւելի քան «Ամիոյ կենոջ այր» եղած էին, այսինքն՝ յաջորդական բազմականութեամբ ապրու էին։ ու նազիանզացին կ'ըսէ թէ իր ծնած ատենը եպիսկոպոս էր իր հայրը։

ինչ որ ալ լինի, սակայն, այս վիճակները հետզհետէ կը սկսէին բացառիկ դառնալ. կուսակրօնութիւնը տակաւ առ տակաւ աւելի գետին կը շահէր, տուանց պարտաւորիչ ըլլալու՝ բայց միշտ աւելի յարգի նկատուելով։ Պատճառներ կան մտածելու թէ ատոր շարժառափակերն էին ամուսնացեալ կղերին, իր ընտաննեկան հոգերուն մէջ արդարապէս մտասոյզ, իր պաշտօնական պարտականութեանց նուազ ուշադիր լինել կարենալը, երբեմն նոյնիսկ այդ ճամբան վրայ՝ կրօնական ընչից մատակարարութեան մէջ տեսնուած զեղծումները և ընդհանուր առժամբ նեպոտականութիւնը, մինչ կուսակրօնութեան ոլորտին մէջ աշքի կը զարնէին նուիրեալ, անձնուրաց և իրենց սրբութեամբն ու մտաւորականութեամբը ականաւոր դէմքեր։

Այսպէս թէ այնպէս, Գ.-Դ. դարերու ընթացքին, կողմացոյցին սլաքը սկսած էր ուղղուիլ դէպի կուսակրօնութիւն։ Եկեղեցւոյ Հայրերէն նշանաւորագոյնները, յիշելով հոս անոնցմէ մէկ քանին միայն, Որոզինէս, Եւսերիս, Հերոնիմոս, Կիւրեղ Երուսաղէմացի, Ոսկեբերան, Հիպաղոլիտ, նոյնիսկ Եպիփան, Եփրեմ զայն կը պահանձնեն, թէև միշտ Պօղոսեան իմացումին դիծով։ Նիկիոյ Տիեզերական ծուրպին մէջ սեղանի վրայ կը հանուի հարցը։ ընդհանուր տրամադրութիւն մը կը յայտնուի ինպաստ կուսակրօնութեան։ մեծամասնութիւնը զրեթէ պատրաստուած էր ընդունել որ ամուսնացեալ հոգերուականները հրաժարին իրենց կիններէն, երբ իր սրբակեաց վարքովը ծանօթ Եղիպտացի անապատական ծերունի կրօնաւոր մը ուժգին ձայն կը բարձրացնէ, ներկայացընելով այդպիսի որոշումի մը դժբախտ հետեանքները ու կը փրկէ կացութիւնը։ Փանզրայի ժողովը, անկէ վերջ, կը թոյյատրէ սարկաւագներու և քահանաներու միայն ամուսնացեալ կենցաղը, առաջինները արտօնելով նոյնիսկ ձեռնադրութենէն ետքը ամուսնանալ։ իսկ 400ին, Սահմանադրութիւնք Առամելոցը տուաքեալներուն բերանը պատուէրներ կը գնէ հրամայող՝ որ սարկաւագները, քահանաները և եպիսկոպոսները, եթէ դեռ ամուսնացած չեն կամ իրենց կինները մեռած են՝ չամուսնանան, իսկ եթէ ամուսնացած են և իրենց կինները ողջ են՝ ուրիշներու հետ չկենակցին, ինչ որ կը նշանակէ թէ անոնց չ'արգիլուիր ամուսնական կենցաղը։ Բայց, եթէ պէտք է հաւատ ընծայել Սոկրատի տեղեկութեանց, Թեսաղիոյ, Մակեդոնիոյ և Ելլադայի մէջ օրէնքի կարգ անցած էր վերջերը որ ամուսնացեալ եկեղեցականները բաժնուին իրենց կիններէն։

Եարունակ եկեղեցոյ այս վիճակով է որ յարածփեցան միտքերը տռաջին չորս դարերու ընթացքին, Արևելքի և Արևեմուտքի մէջ հաւասարապէս, տռանց կանոնապէս և վերջնականօրէն սանանելու կանամքի եկեղեցականութեան սկրզբունքին, բայց առանց նաև կարենալու պաշտօնականացնել կուսակրօնութեան ինպաստ առհասարակ տածուած զգացումները և բոլորովին պարտադիր ընելու զայն հոգերուականներուն։

Այս կացութեան մէջ փոփոխութիւն մը զգացուեցաւ Դ. դարէն սկսեալ, և եկեղեցական կուսակրօնութեան հարցը, թէ Արևելեաններու և թէ Արևետեաններու մէջ, որու ձեր մը յանդելու ճամբան մտաւ։

Առաջինները, որոնք կը թուէին շատ ազդուած ըլլալ Որողինէսի մէկ խօսքէն որ կ'ըսէր թէ «Հոգևորականները Եկեղեցւոյ մէջ ալ կրնան զաւակներ ունենալ, բայց ըստ մատաց անոր՝ որ կը գրէր. Արդեակի իմ, զորս դարձեալ վիշտին Երկնեմ, մինչեւ Եկարենցի ի ձեզ Քրիստո» (Փաղ. Դ. 19), իրենց ուղղութեան նշանաբան ըրին «Առաքելական Սահմանադրութիւնքի վերև յիշուած յօդուածը, անոր մէջ եպիսկոպոսաց մասին եղած արամադրութիւնը միայն իւրացնելով։ Այս միտումին ոյժ տուաւ նաև Սոկրատէ և Մինիսիսէ յիշուած այն աւանդութիւնը թէ Արեւելքի մէջ վաղուց քահանաները, եպիսկոպոսանալնէն վերջ, ժումկալ կենցաղի նուրիրուած են։

Բազում կողմերէ ծայր տուած սովորութիւնը ընդհանուր կանոնի յանդեցաւ ի վերջոյ, նախ քաղաքային և յետոյ Եկեղեցական օրէնսդրութեամբ։ Զ. դարուն (534), Յուստինիանոսեան օրինագիրը արզիւց Գանամբի քահանաներուն աստիճանի բարձրացումը. «Ձաւակ ունեցողը չի կրնար եպիսկոպոսանալ», այն պատճառաբանութեամբ թէ Եպիսկոպոսը, իբրև հոգևոր հայր հաւատացեալներու, պէտք է վերծ լինի մարմաւոր որդւոց հոգերէն։ Հետեաբար, եպիսկոպոսը կամ կոյս պէտք է լինի սկիզբէն, և կամ, եթէ առաջուց արդէն ամուսնացած էր, պիտի չկարենայ մարմապէս յարաբերուիլ իր կնոջ հետ. իսկ խոնարհագոյն աստիճանի վրայ եղած ամուսնացեալ կերպականները իրաւունք ունին շարունակելու իրենց ամուսնական կեանքը, միայն թէ ձեռնադրուելէ առաջ պէտք է ամուսնացած լինին. հակառակ պարագային կարգագուրկ Կ'ըլլան, իրենց ամուսնութիւնը չեղեալ կը նկատուի և անկէ ծնած զաւակները ապօքէն կը համարուին։

Այս օրէնքը, մեծ մասամբ արդէն ժողովրդային կրօնական հանրային զգացումէն ներշնչուած, է. դարու վերջերը, 692ին, Եկեղեցական նուրիտործում ստացաւ Կ. Պոլոյ Տրուլլեան ժողովին մէջ. Եպիսկոպոսը պարտի վարել բացարձակապէս զգացաւ կեանք մը. եթէ արդէն ամուսնացած է, կինը պիտի վանք մը քաշուի, իր ամուսինէն ընդունելով իր ապրուստը. քահանաները, սարկաւագները և կիսասարկաւագները պիտի չկարենան ձեռնադրուելնէն վերջ ամուսնանալ, բայց եթէ կարգ առնելէն առաջ կարգուած են, արտօնուած են ապրիլ ամուսնական կեանքերնին, ըստ բանի Առաքեալին, որ կը պատուիրէ «կնոջ յառնէ մի՛ մեկնել ... եւ առն զիին իւր մի՛ բօդուլ»։

Ա'յս եղաւ Եկեղեցականաց կենցաղի հարցին առած վերջին ձեր Յոյն և Արեւելքան միւս Եկեղեցիներուն մէջ է. դարէն սկսեալ և կը շարունակուի ցարդւ Ասոր հետեանքը եղաւ բարձրադրոյն աստիճաններուն՝ միմիայն կուսակրօն կղերին առջե բաց պահուիլը. ու յաջորդ դարերը լոկ կողմնակի փոփոխութիւն մը կրցին աւելցնել այդ սովորութեան վրայ, ժողովրդական հանրային պաշտօնները յատկացնելով ամուսնացեալ կղերին, առանց սակայն որ աստիկա պատճառ լինէր անոնց եպիսկոպոսացման։ Այդ փոփոխութիւնն ալ սակայն երկարատն չեղաւ. ու հոգիւական ասպարէզն ալ անցաւ կուսակրօն հոգևորականութեան։ Այս վերջինին վրայ՝ իր մատառապէս աւելի պատրաստուած և ընտանեկան հոգերէ և այլ կապերէ վերծ վիճակին համար՝ հանրային կարծիքը տեսաւ առաւելութիւններ, որոնք զինքը աւելի յարմար կ'ընծայէին այդ ասպարէզին։

\* \* \*

ինչ որ ըսուեցաւ Բնդհ. Արեկեան Եկեղեցիներուն մասին, պէտք է նոյնութեամբ հասկնալ նաև մեր Եկեղեցին համար ։ Նոյն ոգին և ըմբռնու մի միենոյն կերպն է արդարեւ որ զարած է մեր նախնիքները Եկեղեցւոյ կեանքին տեսակէտով այնքան կարեոր այդ հարցին՝ Եկեղեցականներու կենցաղի ինդրոյն մէջ։ Այդ մասին թէս որոշ տուեալներ կը պակսին բռւն մեր Եկեղեցական-ազգային իրաւունքի իր ազգիւր ծանօթ ժողովներու տնօրինութեանց և կանոններուն մէջ, բայց մէկ կողմէ Հայ կանոնազիրիքին մէջ ներմու ծուած ըլլալը օտար և համաքիստոնէական այն կանոններուն որոնց մէջ շօշափուած է այդ հարցը, միւս կողմէ Յուստիժիանոսեան օրինագրքին ազդեցութիւնը մեր իրաւական դրութեան վրայ, ինչակս նաև կարգ մը պատմական հանգամանքներ յայտնա։ պէս կը հաստատեն թէ Արեկեան Եկեղեցիներու սկզբունքներն են որ ուղղութիւն տուած են մեզի այդ զետինին վրայ, Այսինքն հայ կղերը իր պատութիւնը պահած է ի սկզբան ամուսնութեան հանդէպ, առանց ենթարկաւելու այս կամ այն կերպով պատճառուած սեղմուներու։ բայց նոյն ատեն բաւական պայծառ կ'երեկի նաև կուսութեան և զգաստ կեանքի ձգտումը կամ պարտագրութիւնը այդ հնակոյն ժամանակներէն նոյնիսկ, Լուսաւորչի և իր տոհմին պատկանող բոլոր կաթողիկոսներէն շատերուն կանամքի լինելը մինչեւ Եղարք բացորդ կերպով կը ցուցնէ առաջին պարագան։ բայց նոյն ատեն իր յաջորդը նշանակուած ատեն, փոխանակ Վրթանէսի, որ իր երիցագոյն որդին եր և ամուսնացեալ, իր և ամէնուն նայուածքը իր կրտսեր և կուսակրօն զաւկին, Արիստակէսի ուղղուիլը պէտք չէ միթէ նկատել ապացոյց երկրորդ պարագային։ Յետոյ Լուսաւորչի հոգևորական ասպարէզ մանելէն զերջ իր կոնջ վանք մը մեկուսացած լինելու աւանդութիւնը, զոր Կ'արծանազը պատմութիւնը, և ապա, Յուսիկի՝ կերպով մը հարկադրաբար ամուսնանալէ յետոյ՝ կարծես ստրացած՝ մինչեւ զերջ այդ կենցաղին հանդէպ զգացած անսիրելութիւնը նշաններ պէտք չէ նկատել բարձր դասու հոգևորականներուն կողմէ զգաստ և ժուժէկալ կենցաղի հակումի։

Աւելցնենք տակաւին թէ յաջորդ դարերուն իր զաւակներու հայր ծանօթ եպիսկոպոսներու, զոր օրինակ Մ'եծն ներսէի Տեղապահ Խաղ Եպիսկոպոսի և Խորով Անձնացի պարագաները։ Կրնան բացարուիլ այրիցացեալ քահանայութենէ Եպիսկոպոսացման հասկացողութեամբ, ինչ որ արդարէ Կ'իմացուի Ս. Գրիգոր Նարեկացւոյ իր մօքը վաղամեռիկ եղած լինելու մասին իր Աղօթազրքին մէջ ըրած մէկ ակնարկութենէն։ Գալով աւելի զերջին զարերու մէջ, ըստ սա կամ նա յիշտակարանին, ամուսնաւոր Եպիսկոպոսներու յիշաւակումն, ատոնք պէտք է մեկնել իրեւ օրինական անկարգութեան և բարուց անկածութեան երևոյթներ, որոնք Լատին Եկեղեցւոյ մէջ ևս պատհած են միենոյն պատճառներով՝ կուսակրօնութեան օրէնքը հոն խստիւ հրամանակարգուելէն ետքն անզամ։

Հաս մեզ, պարզ է և անառարկելի նոյն ատեն, թէ Հայ Եկեղեցին այս հարցին մէջ սկիզբէն մինչեւ զերջ ընթացած է Արեկեան իր միւս քոյր Եկեղեցիներուն որդեզրած ուղղութեան վրայէն, համաձայն զգալով զայն կեանքի

և կրօնքի նկատմամբ դարերու փորձառութեամբն իր մէջ կազմուած համոզուածին, ինչպէս նաև այն պահանջին, զոր միջավայրի և այլ ընկերային առընչութեանց պայմաններ շիներ են իր մէջն ու շուրջը:

\* \* \*

Բայց ինդրոյն մասին մեր տեսութիւնը յայտնելէ առաջ օգտակար կը նկատենք դեռ անդրադառնալ և քանի մը տողերով ցոյց տուլ նաև այն ընթացքը, զոր կուսակրօնութեան հարցը Արևմուտքի մէջ կատարեց Ե. դարէն ետքը, մինչև որ վերջ ի վերջոյ յանզեցաւ այն դրութեան, ուր կը տեսնուի այսօր թիւով և կազմով մեծ այն եկեղեցին, որ Հռովմէականը կամ Կաթոլիկին է:

Մեծ պառակտումէն առաջ, որ Փոտի օրով, 858ին, իրարմէ գտաւանաբանօրէն հեռացուց Եոյն ու Լոտիին Եկեղեցիները, այս հարցն էր որ անոնց միջև գոյացուց բաժանումի առաջին ճեղքուածը. ու սխալ պիտի չըլլայ, կը կարծեմ, ըսել թէ կրօնքի պաշտօնէութեան կենցաղակերպին նկատմամբ անոնց մէջ կազմուած մտածումի կամ մտայնութեան այս տարրերութիւնը պղտիկ պատճառ մը չեղաւ ժամանակին հետ աւելի խորունկցներու համար այն խրացը, զոր այլեայլ, և հաւանաբար երբեմն անարժէք, շարժառիթներ պեղեցին անոնց միջև Անձնականութեան կիրքը, անհատին ու մանաւանդ համայնքի մը մէջ երբ. կը սկսի գոյանալ, կարելի չէ ըսել թէ ինչ թանձ փոշի կը փոթորկէ իր շուրջը՝ անհասկնալի դարձնելու համար երբեմն ամենէն բացորոշ ճշմարտութիւնները ու յաճախ անտեսաննելի ընելու համար ամենէն յատակ և շիտակ դիմերը:

Դախագիս պուածին շորս գարերու և յետոյ յաջորդ երեք դարերու ընթացքին, մինչև ի մուտս հօթներորդին, մերթ ամուսնուոր և մերթ կուսակրօն կերպերուն մէջ տարամիտուելէ վերջ, երբ Արևելեան քրիստոնէութիւնը կանդ կ'աննէր վերջապէս միջին ճել մը առջն՝ իր հասկցած թէ ողմտութեան և թէ ողջախոնութեան տալ խորենով իւրաքանչիւրին իր իրաւունքի բաժինը, անդին Արևմտեանը. երկու կերպերէն միայն մէկին, կուսակրօնութեան, նկատմամբ հետզհետէ աւելի կը զօրացնէր. իր յարումը, հակառակ որ ի սկզբան այնքան չերժ չէր եղած իր եռանդը անոր հանդէպ:

Առաջին անգամ պաշտօնապէս արտայայտուեցաւ ան ի նպաստ կուսակրօնութեան՝ 200ին, Էլվիրայի ժողովին մէջ, օրոշելով որ ամէն ամուսնացեալ կեր (Եպիսկոպոս, քահանայ են.) ընդմիշտ բաժնուի իր ընտանեկան կեանքին, Սիրիկիոս Պապը 236ին գումարուած ժողովի մը մէջ հանդիսաւորեց այդ մտայնութիւնը, նոյն ձեռի ընդլայնելով Հին և Նոր Կտակարաններու բոլոր այն տուգերը որոնց մէջ կը կարծէր անոր միարո իմաստ մը տեսնել:

Քանի մը պարի վերջ, իննովկենտիոս Ա. նորոգեց այդ կանոնը. բայց պիտերը բոլորովին պատրաստուած չէին հանդուրժելու համար հրամայուած խոտառութեանց. Ափրիկէ, Սպանիա և Կոլուա համակերպեցան, բայց վերին իտախոտութեանց. Ափրիկէ, Սպանիա և Կոլուա համակերպեցան, բայց վերին 401ին, Թուրքիո գումարուած կ'ողուայի մէկ ժամին եպիսկոպոնները, 401ին, Թուրքիո գումարուած ժողովի մը մէջ, նուազ իիստ արտայայտուեցան կուսակրօնութեան մասին, ընտանեկան կեանքի արգելքը. բարձրասահման կերին համար միայն զտնելով ընտանեկան կեանքի արգելքը. բարձրասահման կերին համար միայն թօլէտի ժողովը. Ապա միտքով արտայայտուեցաւ նաև Թօլէտի ժողովը. Ամբողջութ բանաւոր. Նոյն միտքով արտայայտուեցաւ

Օգոստինս իրենց մեծ հեղինակութեամբը ոյժ կու տային Պապական իշխանութեան, որուն հակառակողները հետզեւաէ կը խարանուէին աղանդաւորութեան գհիռով։ Մինչև Ե. դ. որ, կիսասարկաւագները կուռակրօնութեան օրէնքին ենթարկուած չէին։ Նոյնիսկ Սիրիկոս Թոյլատու էր եղած անոնց հանդէպ։ Լեռն Ա. նկատելով որ անոնք ալ, սարկաւագներուն պէս, Սեղանին ծառայութեան կը մասնակցին, հրամայեց որ անոնք ալ լքեն ընտանեկան կեանքը, իսկ եպիսկոպոսներուն և քահանաներուն վերաբերմամբ վերահաստատեց Սիրիկոսի և Խննովկենտիփոսի տնօրինութիւնները, Եկեղեցւոյ իշխանութեան հեղինակութիւնը պաշտպանելու նախանձախնդրութեամբ հանդերձ, Կոլուայի եպիսկոպոսները իմաստութիւն նկատեցին մեղմացուցիչ միջոցներ առաջարկել տրուած կանոններուն դէմ մեղանչողներուն համար սահմանուած պատիժներուն առթիւ, զրո օրինակ, փոխանակ կարզընկեցութեան՝ տռկախում, անկեղծօրէն զղացողները վերսախն ընդունի ի քահանայութիւն և օրէնքը ընդունողներուն հանդէպ աւելի բարեացակամ վերաբերմունք։ Այս մտօք Տուրսի, Օրանժի և Արլէսի ժողովներէն իրեն մտաւցուած աղերսներուն ընկառաջելով՝ Լեռն Ա. Թոյլատրեց նոյն իսկ որ քահանայոպետական կամքին համակերպող ամուսնացեալ հոգեորականները կարենան ընակացի իրենց կիներուն հետ, զանոնք ընդունելով սակայն իրեր հոյր, իր բառերով՝ «մարմական յարաբերութիւնները փոխելով հոգեորդ Աւելորդ իսկ է ըսել, զեթէ կատակերգական այս կարգադրութիւնը չկրցուքնաւ զարման մ'ըլլալ միշտ աւելի խորունկցող վերըին։»

Գրեթէ ամէն Պապի օրով, և զանազան առիթներով յաջորդ գարերուն մէջ յաճախ զումարուած ժողովներու կողմէ այս մասին կատարուած բազմաթիւ տնօրինութիւնները ցոյց կու տան թէ ո՛քան բուռն էր զիմազրութիւնը անոնց կողմէ նոյնիսկ որոնց կ'ուղղուէին այդ վճիրները։ Ու մերձաւորազոյն ազգականներու հետ միայն ապրելու հրահանզը, յետոյ, հեռու սանձառերէ՝ փոխեց միայն զայթակութեան տեսարանները։ Ընդդիմութիւնը սաստիկ էր այն երկիրներուն մէջ՝ մասնաւորապէս ուր Գերման ցեղը տիրական էր թիւով և ողգեցութեամբ։ բայց կացութիւնը բոլորովին միիթարական չէր միւս ազգերուն մէջ ևս։ Ստոյք է թէ Եկեղեցական կեանքի այս վատթարացումին քիչ չնպաստեցին բաղացական վերիքայրումներէ յառաջացած ժողովրդային անկարգութիւնները և հանրային կեանքին մէջ ամէն որ բաղցկեղի արագութեամբ ծաւալող անբարյութիւնը, ինչպէս Կարլովինկեանց անկումի շրջանին (Ժ. դար), երբ Եկեղեցական կարգապահութիւնը իսպառ անչքացաւ։ բայց անառարկելի էր մանոււանդ սա իրողութիւնը թէ չարիքին բուն արմատը Եկեղեցւոյ վերին իշխանութեան մէջ էր։ ան ժողովէ ժողով կանոններ, արգելքներ և պատիժներ բանաձեւու աճապարանքն էր ունեցած միայն, իր ուշադրութիւնը հեռուն ուղղելով միշտ, մինչ իր իսկ աշքին տակ, Հոռովիմ մէջ, Եկեղեցականներ պատակներու կը կտակէին իրենց ինչքերը, Եկեղեցւոյ ստացուածքը։»

Իրերը շարունակեցին իրենց զնացքը բարքերու ճախճախստաքի մը մէջէն այսպէս մինչև ժեն. դար. աղէտաքը տիեզերական էր գարձած և անդարմանելի նկատուելու չափ ծանր սաստկութեան մը հասած, երբ, ի ակիզըն ժեն. դարու վերին քառորդին, Գրիգոր Ե. ուժեղ բազովկով սանձեց փոթորիկը, հոգեորա-

կաններու կուսակրօնութեան սկզբունքը դաւանակէտի (ծցու վերածելով, իր արձակած բանադրանքը անբարոյ և անկարգ կլերին դէմ, և ժողովուրդէն անոնց դէմ՝ որոնք ներկայ կը դանուէին անոնց մատուցած պատարագին և կատարած պաշտամունքին, արթսցած հանրային խղճմտանքին ոյժովը նոյնիսկ փրկեց կ սցու Շիւնը։ Առանց այդ հզօր զլուխին, Կաթոլիկ Եկեղեցին պիտի չկարինար իր ծողէն դուրս բերել Եկեղեցական սերունդ մը, հինգ դար ետքը զինքը պաշտոնական համար Բարեկարգութեան պատճառած մեծ ցնցումին առջև։

Տեսանը ահա հարցը իր էութեանը մէջ։ ճանչցանք նաև անոր պատմութիւնը՝ իր դիւ ուոր գիծերուն վրայ, այսինքն անոր ընթացքը ժամանակի ճամբուն վրայէն, մերթ սեպ և մերթ սալապ արտնետնիրէ, ու մարդոց վերաբերմունքը անոր հանդէպ, օր մը կամ դար մը առինքնող և դար մը կամ օր մը գժնեաց իր կողմերուն առջև։ Խոնդիր է հիմակ մօտենալ անոր արժէքին՝ իր պատմութեան լոյսին մէջէն, հասկնալու համար թէ էապէս ո՞րքան համապատասխան է ան մարդկային հոգւոյն և Եկեղեցական ծառայութեան գործին, և ինչշափ իմաստութեամբ է որ Եկեղեցւոյ երկու կէսերը, Արևելք և Արևմուտք, կրցած են ըմբռնել և գործադրել զայն, իրաքանչիւրը իր կերպով։

Չենք քաշուիր անգամ մըն ալ կրինելէ հոս թէ մեզի համար հարցը վար դապետական ըլլալէ շատ աւելի՝ կարգապահական է իսկապէս։ Աստուածաբանութիւնը չէ ուրեմն որ պիտի կըռէ դայն։ զայն պէտք է զնահատէ կեանքին ու կրօնքին առողջ հասկցողութիւնը, մէկով միւսը փոխադարձապէս զօրացնել կարենալու իրատեսութիւնը ունեցող, այսինքն հոգեոր կեանքին մէջ ալ յաճախ գործնական սկզբունքներէն առաջնորդուիլ զիտցող ողջմտութիւնը։ Այդ ողին՝ բնութեան և բանականութեան իրաւունքներու հանդէպ մարզը և կրօնաւորը ըստ չափու աստիճանի յարցանքի պարտադրող այդ ողին է արդարե որ վարեց հաւատքի կեանքը առաջին դարերուն։ ու Եկեղեցին, ոգորելով հանդերձ զնոստիկեան այն մոլորանքին գէմ, որ մարմինին ու մարմնական հակումներուն մէջ կը ցուցնէր չարիքին արմատը, երկկողմանի ծայրայեղութեանց առջև թումբ դնելու համար, հետեւով Պօղոսեան պատզամին, սկիզբէն խակ արտօնեց թէ ամուսնաւոր և թէ ամուրի հոգեորականութիւնը Բայց քրիստոնէական կեանքին թիւով և կազմով, մտածումով և մշակոյթով յարածուն յառաջատուութեան մէջ կարելի չէր ընդմիշտ անշաբդ պահել հաւատսարակշութեան մէտը, ու եթէ չինէին նախ Թէոդոսեան և յետոյ Յուստինիանոսեան օրէնքները, այսինքն եթէ պետութիւնը իր ուժեղ ձեռքը չդնէր գործին վրայ, սիրտերն ու միտքերը, այսինքն կիրքերն ու տեսութիւնները պիտի յորդէին դէպի այս կամ այն կողմ, ու Արևելքը շատ աւելի պիտի ենթարկուէր բարոյապէս այն շփոթ կացութեան, որ յետոյ երկար դարեր շուարումի պիտի մատնէր Արևմուտքը։

Երկու կենցաղակերպերուն հանդէպ միշին ճանապարհ այն ձեւ, զոր Արևելեան Եկեղեցիները նախ քաղաքային և դար մը վերջ միայն կրօնական Փրէնսորութեամբ որդեգրեցին, քացարձակապէս արդար չէր և չէ անշուշտ, քանի որ հոգեորականութեան մէկ կամ միւս մասը կը զրկէ իր այս կամ այն իրաւունքներէն։ բայց, արդարութիւն է միայն ըսելու շատ աւելի իմաստութիւն կայ անոր մէջ՝ կեանքն ու կրօնքը իրարու հետ ներդաշնակելու և մէկը միւսով

ակարացնելէ աւելի զօրացնելու տեսակէտով։ Թո՛ղ շըսուի թէ ինչո՞ւ ուրեմն Արևմտեանք ամէն կերպով այսօր աւելի զօրեղ են քան Արևելեանները։ այդպիսի առարկութեան մը ի պատասխան կը մատնանշենք միայն Դ-ժին, ութեան այն տեղութիւնը ուր բարոյական գահավիժումներու ամենատխուր թատր դարձաւ Արևմուտքի եկեղեցական կեանքը, և անդրագոյն ևս թերևս՝ մինչև Բողոքականութեան նախօրեակը։ որ է ըսել թէ այլո՞ւր պէտք է փնտռել մէկին ներկայ անգորութեան և միւսին հզօրութեան պատճառները։

Բայց դարձնելով մէտալին միւս կողմը, կարելի չէ ուրանալ թէ կուսակրօնութիւնը հոգենորական կեանքի տեսակէտով ունի առաւելութիւններ։ անոնց առաջին պանծացնողն է Առաքեալն ինքնին, նախ իր անձով, յետոյ իր խօսքով «Ուր անկինն է՝ հոգայ զծեառն, թէ ո՛րպէս հանոյ լիցի Ֆեառն, եւ որ կանամբին է՝ հոգայ զախարինին, թէ ո՛րպէս հանոյ լիցի կնոջ իւրում ... զի կոյսն հոգայ զծեառն, զի իցէ սուրբ մարմնով եւ հոգով, եւ առնակինն հոգայ զախարինս, թէ ո՛րպէս հանոյ լիցի առն իւրում»։ այդ առաւելուաթեանց ըմբռնումովն է առշուշտ որ Արեւելեան եկեղեցիները հոգենորական առպարէզի բարձրագոյն աստիճանաւորներուն համար անհրաժեշտ կը նկատեն զայն, ու Լատին եկեղեցին անտարակոյն միենոյն զգացմամբ և մտածումով է որ այլամերժօրէն կապուած է անոր։

Աստուծոյ սեղանին հանապազորդ պաշտօնեան պէտք չէ պաշարուած լինի աշխարհիկ և ընտանեկան հոգերէ։ անիկա պէտք է հայր լինի ոչ թէ քանի մը զաւակներու միայն, զորս կրնայ ունենալ ըստ մարմնոյ, այլ բազմաթիւ հոգեր որդիներու՝ զորս նուիրական կոչումը պիտի յանձնէ իրեն։ «Հրեշտակային այդ կուսական կեանքը» Պոսիւէի բառերով, աղբիւր մաքուր հայեցողութեանց, սուրբ կեանքի մը բոլոր առաւելութիւնները կրնայ իրականացնել հոգենորականին անձին վրայ։

Այս է, իր պարզագոյն ձերն մէջ, հիմքը փաստարկումին, որով ամէնքը բայց մանաւանդ Լատին եկեղեցին կը ճգնին պաշտպանել կուսակրօնութեան դատը։ Ու ճշմարտութեան շատ կարեսոր բաժին մը կայ այս խօսքերուն մէջ։ Ամենամեծ մասը այն բոլոր նուաճումներուն զորս քրիստոնէութիւնը ունեցած է ի վաղուց մինչև ցայսօր կեանքի բոլոր մարզերուն վրայ, զրեթէ ամէնքն ալ պտուղն են կուսակրօն նուիրումին։ Սրբազն զիտութեանց և զրականութեանց, արուեստից և դպրութեանց, ուսուցման և դաստիարակութեանց, բարեպաշտական և բարեգործական հաստատութեանց, հովուական և առաքելական գործունէութեանց դաշտերուն վրայ ընդհանուր առմամբ կուսակրօններն են որ փայլած են ու կը փայլին ցարդ իրեն անխոնջ և անկեղծ մշակներ, բոլոր եկեղեցիներուն բայց մանաւանդ Լատինականին մէջ։

Անկարելի է որ կանամբի եկեղեցականներ, որոնք, որքան ալ զիտակից և նուիրեալ, իրենց տուններն ու ընտանիքը մանաւանդ անխոնմ թողած առենանին «ի հաւատոց ուրացեալ եւ չար եւս խան զանինաւաս» պիտի համարուէին ըստ մտաց առաքեալին (Ա. Տիմ., Ե. 8), այնքան ուժգին և ջերմօրէն կապուին հանրային ծառայութեան գործին, որքան կուսակրօնները։ Սեղանիս վրայ ունիմ զիրը հոգեզգօն և ազգասէր քահանայի մը, որ իր կեանքի ընկերուէին



Ու այս պարագան է որ պէտք է խօսի մեզի:

Դաւանական և կարդապահական մէջէ բաւականէն աւելի կէտերով կը տարբերինք մենք իրմէ, կաթողիկ եկեղեցինքն. բայց այս ամէնը չ'արդիկեր բնաւ զմեզ կանգ առնելէ, այս կէտին մէջ մասնաւորապէս, իր օրինակին առջև։ Բաել չենք ուզեր անշուշտ թէ պարտինք ամրողավին որդեղբել իր օրինակը, կուսակրօնութիւնը բովանդակապէս ընելով կենցաղակերպ հայ հոգեռորականութեան, վերջ տալով կոնամբի եկեղեցական կերպին։ Ոչ ամէն եկեղեցի իր գոյութիւնը կրնայ շարունակել իր նկարազրին իրեն պարտադրած ուղղութեան վրայ. մերինը, որուն վարչական կազմը, սկիզբէն ի վեր, հեռի լոկ կուսական լինելէ, ժողովրդախառն բնութիւն մ'ունի, ընդունակ չէ բնաւ այդպիսի փոփոխութեան մը։ Հոռվմէտական օրինակը պէտք է շեշտէ միայն մեզի կուսակրօն դրութեան պահպանութեան կարենորութիւնը, այն վիճակին և սահմաններուն մէջ, ուր դրած է զայն մեր նախնեաց իմաստութիւնը։

Ամուսնաւոր եկեղեցականութեան առջև բարձրագոյն աստիճաններուն բացումը ներկայ պայմաններուն մէջ ջնջում միայն պիտի նշանակէր կուսակրօնութեան, իսկ այսպիսի յախուռն անօրինութեան մը հետեանքը պիտի ըլլար եկեղեցական կեանքի մէջ ծաւալումը նեպստականութեան, որ ծանրագոյն ազէտքի մը առջև պիտի դնէր զմեզ ազգովին։

Ընտանեկան և ժողովրդային հոգուութեան և պաշտամունքային կատարողութեան գործը աննշան չէ երբեք ո՛չ իրրե պարտականութիւն և ո՛չ իրրե արդիւնք. ու մեր կանամբի կղերը գեռ որքան աւելի զարդանայ, այնքան աւելի օգտակարապէս պիտի կարենայ ծառայել այդ գործին, մինչ իր կենցաղին հանգամանքները դժուար թէ ներդաշնակուին պահանջներուն վարդապետական և բարձրագոյն հոգուութեան ասպարէզներուն, որոնց աւելի նպատակայարմար է կուսակրօն հոգեռորականութիւնը։

Այս վերջինին շարքերուն մէջ անպատրաստ և ապիկար անձերու գոյութիւնը պէտք չէ ծառայէ իրը փաստ հակառակ տեսութեան մը։ Բարեկարգութեան գործը պիտի լինի տնօրինել այդ մասին կարենորը, որպէսզի երկու շրջանակներուն մէջ ևս իրենց ասպարէզին և կոչումին արժանաւորները միայն ընդունուին։ Ու արժանիքի համեմատ բարձրացում ըսելով պէտք է հասկցուի ոչ թէ քահանայութենէն եպիսկոպոսութեան կամ տռաջնորդութեան ելլելը, այլ իւրաքանչիւրին՝ իրեն յանձնու ած պարտականութեանց սահմանին մէջ ունեցած արդիւնագործութեան պատուով զնահատումը, Ղեռնդ երէց, Վարդանանց դարուն, քահանայ մըն էր, հոգեոր արժանիքով և զիտութեամբ այնքան ուշագրաւ, որ իր գարուն և պատմութեան մէջ իր անունովը կոչուեցաւ եկեղեցականներու այն խումբը որուն մէկ անդամն էր ինքը, և որուն մէջ սակայն կային եպիսկոպոսներ ու ժամանակին կաթողիկոսն ինքնին։

Կ'եղրակացնենք. ամուսնաւոր քահանայութիւնը անհրաժեշտ է Հայ եկեղեցւոյ կեանքին համար, իսկ ամուրի հոգեռորականութիւնը՝ անոր գոյութեան պահպանութեան համար։

Այս ըմբռնումով է որ մենք համամիտ ենք Զեկուցումին եղրակացութեան, («Սիրո», 1938 Յունիս) (Եարունակելի՝ 8)

ԹՈՐԴՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ

## «ԿՐՈՆԱԿԱՆ

### ՀՈԳԻ ՄԸ ՓՐԿԵԼ

Նախորդ մեր յօդուածով («ԱՄիս», 1985 Հոկտ.-Դեկտ.) խօսած էինք իրենց բարքով ու կենցաղով այլոց գլուխ օրինակ հանդիսացող, «յև խօսքով՝ ուրիշները գայթակղեցնող, մոլորեցնող մարդկերուն և Ֆրուջ կողմէ անոնց վերապահուած ծանր պատիժին մասին»:

Այս յօդուածով պիտի շշափենք միւս երեց մէտապիին, այսինքն ուրիշներուն բարի օրինակ հանդիսացող, իր նմանները ուզիղ համբուն առաջնորդող մարդոց մասին, որոնք շաղցն են մարդկութեան, կեանքի դառնութիւնները համեմել փորձոց:

Պատմութեան մէջ անմահացած են մարդեր, որոնք իրենց վիճակուած նիւթական բարիքներէն բաժին հանած են ուրիշներուն, գոհացու տալով բախտէն զարնուած մարդոց կարիքներուն, կըրթական ասպարէց բանալով ուսումնածարու բայց չքաւոր պատանիներուն առջև և կամ սրբելով արցունքը և մեղմելով քաղցն ու վիշտը որբին ու անկարին, Արդարե, գուտարէ երեակայել պատկերը զոր պիտի պարզէր մարդկային կեանքը, եթէ ունեսուները իրենց գանձերը ուզէին անկուսորակ պահել մինչև ծայրը իրենց գերեզմանին:

Առանց կողքին կա, նաև գասակարգը համեստ ու մեծնողի մարդերուն, զուրկ նիւթականին բարիքէն ինչպէս ճնշումէն, իրենց հոգիներու փրկութենէն անդին ժոհանոցուելով նաև իրենց շուրջիններուն փրկութեամբ։ Որոնք մէկ կողմէ կը տառապին իրենց միջոցներու անբաւարարութեան պահճառաւ ուրիշներուն օգնութեան հաօնի չկարենալուն, սակայն միւս կողմէ կը մտիթարուին այն մատաւածովը թէ նիւթական բարիքները չեն կրնար տեսլ գերեզմանէն անդին։ Անոնք կը նային իրական պատապային, յաւիշեաններու վրայ երկարաձգուազ,

Այս մասին շատ յատկանչական տաղեր ունի Յակովոս Առաքեալ, իր կործուղիկայց թուղթի վերջաւորութեան, ուր կ'ըսէ. և նրարք իմ, եթէ ոք ի ձէնջ մուլորեսի ի ճանապարհէ նշմարտութեան, և գարձուացէ ոք զնա, զիտասցէ զի որ դորձուացէ զմեղուարն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեցէ զոգի իւր ի ճանաւանէ և ծածկեսցէ զրազմութիւն մեղաց։

Արդարե, մեծագոյն պարզեց զոր ժարդ կրնայ ստանայ՝ թողութիւնը կամ նրաւուն է իր մեղքերուն, Աւելարանին անպակասելի գտննն ու անսագիւտ ադամանդն է ան, կ'արժէ դիտել որ թիսու ամէն անդան երբ հիւնդ մը կ'ազատագրէր մարմական իր խօթութենէն, չէր յառնար նաև ազատագրել զինք հոգեկան իր ախտէն, չնորհնելով թողութիւն իր գործած մեղքերուն։

Մեզի կ'իյնայ ամէն տաեն ու ամէն առիթով զգացուութեան հրաւիրել մէր նմանները, զգուշացնել ծուռ ու սխալ յաճախ լոյս ու գրաւիչ և ճամբէն ընթացողները զիրենք սպասող կործանարար անգունդէն, ինչ փոյթ թէ քազաքակիրթ այս գարու մարդեր մեզ կոչէն խաւարամին կամ յետագիմական։ Գիտութեան լոյսը պէտք է օր լուսաւորէ նոն և աւելի ովզ և մէր հոգեկան հորիզոնը։

Ինչպէս չէիչել հոս Ֆրուջ խօսքը. Ովունչ կ'արժէ եթէ մարդ աշխարհը շահի և իր հոգին կարսնցնէ։

Եթէ կ'ընդունինք թէ հոգին գերազանց է քան նիւթը կամ մարմինը, այն տաեն յատկօրէն կրնանք ըմբռնել թէ որքան է հոգիներու փրկութեան գործը, ու որքան ծանր՝ պարտականութիւնը դրուած մարդոց ուսերուն, Ոչ ոք զերծ է այդ պատասխանատուութենէն, թէն եկեղեցւոյ սրբազն բեմէն քարօզու հոգեորականներ կու գան առաջին գծի։

Զկայ աւելի մեծ ու խոր հրճուանք քան այն՝ զոր կ'ունենայ հոգեկար մշակը ի տես իր ցանած հունտերուն ու սերծերուն բարւոք անօմին ու բողբջումին։

Գէմոր Ս. Ճինհիմիջեան

## ՄԵՂՔԻՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ

Ինչպէս որ առքիքերութիւններ գոյ յութիւն աւնին մեղքերու զանազան խըժն բաւրութիւններու միջն - մահացու և ոչո մահացու, ծանր կամ թեթև ու զանցան ուղի - , նմանապէս առքիքերութիւններ կան անոնց գործադրութեան եղանակին մէջ. Այսպէս, Շնորհալի իր ռՀաւատով խօսագանիմէին մէջ կը յայտնէ թէ մեր զանչած է շխորհրդագ, բանիւ և գործով, իսկ կաթոլիկ Եկեղեցին այս երեքին վրայ կ'աւելցնէ նաև առնեգութեամբ կամ զպանութեամբ բառը, զոր կը զնէ Ա. Գատարացին Ներկայ հաւատացեալի բերնին մէջ, կտարեալ զղջումով մասնակից գարձնելու համար զի՞նք Սուրբ Խորհուրդին:

Ճիշդ է թէ տեսանելի աշխարհի մէջ գործուած մեղքն է որ ամենէն աւելի աւերներու և գժրախտութիւններու պատճառ կը հանդիսանայ, և ըստ այնմ անոր հեղինակը կը դատապարտուի և պատիժի կ'ենթարկուի տեղական իշխանութեանց փողմէ, Բանիւ՝ այսինքն խօսնվ եղած մեղքերը նուազ ծոնր կը կշռն, Առախօսութիւններ, հայոցյանքներ կամ առ առաւելն ապառանալիքներ են անոնք, սրոնք կրնան յետո կոչուիլ հնթակային կողմէ, մինչ գործուած մեղքերու արդիւնքները անդարձմանելի են յաճախ: Իսկ խարեղով կամ մածուրեամբ եղած մեղքեր աւելի ներողամիտ աշքով է որ կը դիտուին, քանի որ անոնց պատճառած աւերները յաճախ կը սահմանափակուին ենթակային հոգեկան աշխարհէն ներս, պղծելով անոր մթնոլորտը: Հարկ չենք տեսներ խօսիլ պարտապանցութեան մասին, քանի որ գրարիթք չգործելը չարիք մըն է ինքնին խօսքը աֆան ապրանք դարձած է հրապարակի վրայ:

Մեղքերը այսպէս կը գասաւորուին ու կ'արժեսորուին սակայն երբ դիտուին լոկ մարդկային չափանիշով: Ասուուծոյ հայեցակէտը տարեկը է բոլորպին: Անթէ ինչու Շնորհալի, շրջելով մեր պարզած ցուցատախտակը, խորհեգով կատար-

աւած մեղքերը կը բերէ առաջին կարգի, հիմունելով անշուշտ այն իրողութեան վրայ թէ մեղքին processus իր ձնունդը կ'առնէ մոքեն (հիները պիտի ըսէին սրտէն), գրսեւորուելով ապա խօսքի կամ գործի (արարքի) երեսյթներով:

Յիսուս այս հարցը շօսափած է մասնաւորապէս կերան Թարողին մէջ: Այսպէս, օրինակ, երբ կը խօսի շնութեան մասին, պիղծ այդ արարքին մասին խորհուղարք անձը կը դասէ զայն զործողներու շարքին, յայտնելով թէ ան շշնացաւ արդէն ի սրտի իւրումք:

Եթէ մեր սիրաց բորբոքած է փախ-գրէժի զգացումով և զնուած ենք սպաննել մեր հակառակորդը, մեր այդ ու ծրագիրը իրողործելու համար պայմաններուն ընձեռած հնարաւորութիւնը կամ դիմած դժուարութիւնը ոչինչ կը փոխին կացութենէն: Երկու պարագային ալ - այսինքն մեր հակառակորդը զգեստնել մեզի վիճակում թէ ոչ - նոյն մեղքով կը ներկայանանք երկնաւոր Դատաւորին առջև: Աշխարհիկ դատարաններ կրնան անպարտ արձակուի մեզ և մարդիկ սուրբի պատկը կրնան գնել մեր ճակտին, բայց մեր խիզնը, իրըն արդար դատաւոր, չ'ուշանար մեզ զգացնել ահաւորութիւնը մեր արարքին:

Մեղքերը կը նմանին թուխս ու գորչ ամպերու: Ինչպէս որ երկնքի երեսին գոյացոծ ամպերը կը խափանեն լոյսը արեւեն, նմանապէս մեր մաքի հորիզոնը խճաղող ամպերը - պիղծ ու չար մտածումներ, կորի զը մեղքին - կը մթագնեն լոյսը ճշմարտութեան, լոյսը Աստուծոյ: Ու ինչպէս որ մաւթի մէջ քալոզը աւելի հակամէտ է սայթաքելու և իյնալու, նմանապէս մեղքի խաւարին մէջ խարդ խափող անհատը հակամէտ է իյնալու բարոյական խորխորատը: Եղո՞ւկ այս վերջիններուն, զանզի անոնք ֆիզիկական քայլայման ու ֆճացումի դիմելէ զատ, իրենց միւս, մնայուն կէսը ևս կը տանին դէպի կորուստ, զրկուելով բոլորիս վիճակուած Ֆիրոջ Արքայութեան ժառանգութիւնը եւլաւու գերազանց փառքէն:

Գիլրդ Ս. ձինիվիջնեան

## ՉԱՑԼՏ ՀԱՐՈԼՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

### CLXI

Կամ նայել՝ անսխալ աղեղին Տիրոջ,  
Զասծուն՝ եերօդուքեան, կեանք-լոյսին անճառ,  
Արեւին՝ մարդուն մարմնով, յօնթով ողջ,  
Ռազմին մէջ միւս յաղթ դէմքով լուսափայլ  
Նետն նոր արձակած — սըլաքը պայծառ  
Սնման վրէժով: Մէջն դէմքին, աչերուն  
Աղուոր բամահրանք եւ ոյժ վենափառ՝  
Եւենց ամբողջ ողջն կը սփռեն հեռուն.  
Մէկ նայուածենվ յայտնելով իր աստուածութիւնն:

### CLXII

Բայց զիրգ մարմնին մէջ՝ անշային սէր,  
Զեւուած մենաւոր յաւերծահարսէ մ',  
Ծոցն որուն կ'րդաւ սիրող մը անմեռ.  
Դիրուած սէրէն արդ, արտայայտուած է  
Բովանդակ իսէալ գեղը, որ կ'օրինէ  
Խիստ աներկրային վիճակը մըտաց՝  
Երբ ամէն մածում հիւր մըն է երկնէն —  
Անմահական ողլ: Կը սպասեն կեցած  
Ասդերու նըման մինչեւ հաւատուին անոնք առ Աստուած:

### CLXIII

Թ' իւաւ Պրոմէքէսս՝ հուրն երկնէն գողցաւ,  
Տըւաւ մեզ ի պահ. անոր փօխարէն  
Այս նըրաւայի արձանն ըստացաւ,  
Բանաստեղծական կերպն այս մարմարէ  
Յաւիտենափառ, որ ձեւն առեր է  
Թ'եւ ձեռով մարդուն, ոչ խորհրդով բայց.  
Ժամանակն ինք զայն սրբացուցեր է,  
Խոպուա մը անգամ իրմէ չէ պակսած.  
Դարեր չեն եղծած, կը ընչէ բոցը որով էր կերտուած:

### CLXIV

Ո՞ւր է բայց պանդուխտն՝ իմ երգիս հիմա,  
Անցեալին եղաւ, որ անոր սատար.  
Կը բրիի այլեւս ան կը տնտընայ,  
Ոչ եւըս է ան — իր հուսկ ունչն է ալ.  
Վերջն իր բափառմանց — տեսիք ընչասպառ,

Խնմնին ալ ոչինչ — քէ էր խսկ մի բան,  
Եթէ սոսկ պատրաճն մը եղած չըլլար,  
Թ' ապրող, տառապող ձեւի մ'էր նըման,  
Թող անցնի, ըստուերն իր կը նըւաղի ի կոյս կործանման:

## CLXV

Որ կը հաւամէ ուու, Դոյութիւն, Կեանք,  
Զոր կը ժառանգենք զերք մահու ծածկոյթ,  
— Տարածուն աղօս տիեզերական ծածք,  
Որուն տակ ամէն ինչ պատրաճն է սուս.  
Կը սուզուի մեր մէջ ամէն ամպակոյս,  
Եւ ինչ որ երբեք ըլլար ուղագած.  
Տալով փառին ալ տրամիրիկնամուս  
Ցուցնելով տնուր պասկ մթեզրին վրայ յած,  
Որ առաւել տան Գիւերը խաւար կը մթազնէ նայուածնն:

## CLXVI

Ու մեզ կը դրկեն քննել՝ վիհն խոր,  
Խմանալու թ' ինչ կը մընայ տակաւ,  
Երք կազմն այս ըլլայ նըւազ տան ինչ որ՝  
Խսկութիւնն իր չուառ . . . Ա՛լ չըսենք բնաւ,  
Որ ան տակաւին կ'երագէ համբաւ  
Ու սրբել փուշին ահօւնէ անշան.  
Օ՛, երջանիկ խոհ — նոյնն ըլլալ նորէն — բաւ  
Զէ՞ր երեմնին բեռն մեր սրին վրայ,  
Միւրս՝ քրիներ որուն կարծես թ'արին ըլլայ:

## CLXVII

Լըսէ՛, անդունգէն. կու զայ ձայն մ'ահա,  
Երկար, հեռահաս մրմունց մ'ահաւոր.  
Կարծես թէ ազգի մ'արիւնն անխընայ  
Հոսէր վէրմէն իր անբուժելի, խոր,  
Ու տամուն, մուրին մէջէն՝ գետինն նզօր  
Յօրանշմամբ հեղուսւէր, վիհն՝ ոգիներով լիք . . .  
Եւ արքայազուն կինն՝ տգոյն, աղուոր,  
Թէեւ բազազուրկ — վետակի մայր — Գիրկն  
Մանուկ մ'ունի, ծոցն իր սակայն է կաթնազիրկ:

## CLXVIII

Ո՞ւր ես Բարունակ արքայից, պիտաց,  
Ցանկալի կոյս տաս ազգերուն, մեռա՞ր.

Մարք չէր շիրմին, որ նըւազ սիրուած՝  
Քուկինիդ փոխան, նըւազ վեհափառ  
Գըլուխ մը գրկէր: Վայրկենական մայր,  
Զաւկիդ հակ՝ սրտէդ կը հոսէր արին,  
Մահն երբ տաճանիդ տրւաւ վերջ իսպառ.  
Քեզ հետ խոյս տրւաւ եւ երջանկութիւն,  
Խոստացուած նրնուանք, որով Անգլիան պիս' րլար զեղուն:

## CLXIX

Գեղջուկէ անվրտանգ կ'երկնեն — էր սակայն  
Աչ դուն, որ էիր երջանիկ, պատուած.  
Չլացողք արքայից համար, ժե՛ կը սգան,  
Տե՛ս, Ազատութեան սիրը ծանրացած,  
Եր հօյլ վիշտեն է ժեզ համար մոռցած:  
— Թափեց մարդանին իր՝ հախ զլուխդ ի վար,  
Տես Ծիածանն իր, զուն, տէր վըսացած,  
Դժբախտ ամուսին — զուր ամուսնացար,  
Դուն լոկ տարուայ մ'ամուսին եւ մեռելին հայր:

## CLXX

Պըսակիդ հագուս կանեփէ հիւսուած,  
Հարսնիմիդ պտուղն մոխիր — փուռու մէջ ունա՞յն  
Ուկեներ զսրիկն Անգլիոյ տրուած —  
Միիններու սէ՛ր ... որուն ապագան  
Էկն վատահած: Թ'իւ մայրն իր կը սգան  
Ուկորներն իսկ մեր, բայց զուրգուրանին  
Հընազանդէին պիս' իր աղջրիան  
Մեր որդին, անոր օրինեալ ժառանգին  
Կը սպասէին զեր նովիլիմ աստղին — ոչ ասուպի մ'ողին:

## CLXX

Վա՞յ մեզ, ոչ անոր, ան հեզ կը ննչէ.  
Յեղյեղուկ ծուխը ունչին ռամկական  
Ունայն լեզուին խրաս կը ըընչէ,  
Ըսկած ծնունդէն միապետական  
Կարգին, կը հնչէ զերք մահուան պատգամ  
Խեխանաց ունկին. մինչ՝ ազգերն զերի,  
Խենքութեամբ զինուած, վեր կենան դժկամ.  
Տապալեն զաներն կոյր հզօնների,  
և անոնց նժարին գէմ նետեն ծանրութիւն մ'որ զանոնք հմիի:

## CLXXII

Բախտին՝ այս կրնար ըլլալ, բայց իմչո՞ւ  
Մեր սիրու կ'մերժէ: — Զի դեռասի, աղուոր,  
Ո. Ենիք բարի, մեծ՝ առաջ թևամու,  
Հարս էր եւ մայր — արդ կը պառկի անդորր.  
Ի՞նչ կապէր իզեց այս մահը խոժոռ՝  
Ա. Առանց սրտէն մինչ՝ հպատակին հըլլու,  
Ելեքըրական զերբ հարուած հըզօր,  
Ի՞նչ լոյսեր մարեց ան մօսն ու հեռու:  
Երկիրն եեզ սզաց ... Ո՞վ հանդիպած էր այստան մեծ սիրոյ:

## CLXXIII

Տես, նեմի, քանուած մէջ ծառուս բլրաց  
Այնքան հնուու, որ կաղնին արմատախիլ  
Ընող մրբին, որ սկիփանու ալեաց  
Զուրն իսկ կը պիռէ անդրսահմանէն իր,  
Կը նետէ փրփուրն երկնի դէմ անծիր,  
Բայց կ'ինայէ ձուաձեւ բու բիւրեղ լընին,  
Եւ ոխէն սիրած՝ դէմն իր չի փոխուիր,  
Այլ կը պահէ խիս պաղն իր նայուածին,  
Նծկուած ինքն իր վրայ կծկումով հնացող օձին:

## CLXXIV

Մօսն Ալպանօին, գետն հազիւ զատուած  
Կ'ըոլայ բոյր հոլտէ մ'. ո հեռո՛ւն Դիբերն  
Կը հոսի ոլոր: Նովն լայնատրած  
Կը լըւայ Լատին երկրի ափունքներն,  
Ուր մարտի հանեց հսկայ դիւցազներն՝  
Ում(\*) աստին բարձրացաւ վերեւ կայսրութեան:  
— Աշիդ Կիկերոնի հաճախալայրն էր,  
Խսկ հոն ուր լերինք կ'զոցեն տեսարանն,  
Սապինայ հերկուած ազարակն երզչին էր ըգբուարան:

## CLXXV

Մոռցայ — բայց. — Պանդուխս սրբարան հասաւ,  
Ուրեմըն պէտք է բօղունք մենք իրար,  
Իր եւ իմ զործն ալ գրեթէ վերջացաւ.  
Վերջին հեղ նայինք օվկիանոսին ա'լ,  
Միշերկրականի ալիմներուն պարն

(\*) Կիկերոն:

## Ա. Ն Վ Ե Ր Ն, Ա. Գ Ի Բ

Զիւնի պէս ներմակ մօրթ ոնէր Առնչոն,  
Նայուածքով աղու, մէկ աչք դեղին  
Միւսը կապայ:

Զարդն էր մեր տունին եւ հիւրեր բոլոր,  
Կը փայփայէին քախէն մազերուն,  
Հիացումով խօր:

Ազին քաւարծի պարզուծ զերթ դրօս,  
Ու իննավայել կը որջէր հպարտ,  
Սենեակէ սենեակ:

Կը նըմանէր ան լերան ոզիին,  
Լերան նըմայք կար իր աշխերուն մէջ,  
Դիւրիչ բայց վայրի:

Խոյս կու տար իրեն մօտեցողներէն,  
Վախուով մ'անձանօթ, զգալով գուցէ  
Թէ մարդն ապիրատ,  
Արարած մըն է անվրտանելի,  
Ժափին իր քակարդ, գանին ալ չարիքի  
Բոյն վաւերական:

Դիտեմ, կեցած վրայ Ալբան բարձունքին.  
Նայինք հին ընկեր ծովուն սիրավառ,  
Որ Կալբէէն մեր վեցին նայուածքին  
Առջես բացաւ այս ընթացքն մինչեւ բուխ Եւսենի հոսքին :

## CLXXVI

Դէա՝ նիլ Սիմալիկատ — տարիներ երկա՞ր,  
Երկար, ոչ շատ, որ մեզ՝ բերեր են,  
Մեզի՞ երկուէին. արցունք ու ցաւ ալ,  
Եւ ուր ըսկանն՝ դեռ հոն ենք մենք նորէն,  
Բայց մեր ընթացքն չէ անցած զուրօէն,  
Ռինցած ենք վարձ — ահաւասիկ ան ...  
Կրնանք բերկիրի դեռ արփայն ըոլերէն,  
Քաղել խինդ երկրէն, ծովէն, չինչ այնքա՞ն,  
Կարծես քէ մարդ չըլլար երբեք պղտորող զայն:

Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԻՆԱՆ

ԼՈՐՏ ՊԱՅՐԱԾՆ

Երբ կը մըսածեմ թէ ա'լ չկայ ան,  
Սանցնն աննման, կ'իջնէ հողիխ  
Թախիծ մ'անանուն,  
Յուս մը անցեալէն, կարօս մը լոխն,  
Որ արիւնածոր վէրքի մը հանգոյն  
Կը բացուի անբոյժ:

Դուն զիս լըմեցիր, սիրելի Սանչօ,  
Ալիւրս մէկտեղ չենք բլար յաւէս,  
Կը փակիւմ աշխերս օրուտն լոյսին դէմ,  
Որ աննինչ մնայ յիւսաւակդ աղուոր,  
Մտիս դէմ ընդմիւս:

Կարծես կը զգար ան իր տիսուր մահուան  
Նախօրեակին այն, թէ այլեւս յաւէս  
Մէկտեղ չենք բլար:  
Աչերով խոնաւ կը նայէր ինձի,  
Զէի տեսած ես տիրութեամբ լեցուն  
Աչմեր այդպիսի:

Վերջին օրերոն անկին մը բառուած,  
Կը մըրափէր միւս, չէի զիսեր թէ!  
Մահուան հունն էր այն:  
Ամպերուն մէշն արծաք լուսնկան,  
Զերք յուղարկաւոր կ'արտասուէր կարծես  
Սանչոյի համար:

Դուք որ տեսած էք լուսնի պէս մահուր,  
Եխանավայիլ Սանչոն բըմահան,  
Ցիւցէք ինձ հետ մահն իր վաղածամ  
Եւ բարի եղէք  
Իր յիւսաւակին թափելու յօժար,  
Կարիլ մը արցունք:

ԵԶՈՊ



### Ք Ա. Ռ Ե Ա. Կ Ն, Ե Ր

Խնկած եմ յաճախ բարձունքներէն՝ ցած,  
Աներս անխնայ՝ հարերուն զարկած.  
Բայց ամէն անզամ, վիճին մէջէն խօր,  
Կառչած եմ նորէն երազի մը նոր:

Վայլիլու համար կեանին այս անցաւոր  
Դրամ է նախ պէտք, յեսոյ ժամանակ.  
Աշխարհի վրայ բայց ե՞ր եղած է որ  
Եւկունն ալ հալեն հաւս ու ներկաւակ:

Ա՞յս, ե՞ր դիզուեցաւ ուրջս այստան մութ,  
Բարին դարձաւ չար, իսկ իրաւը՝ սուս.  
Կեանիս արեւը, վառ ու ուղափայ  
Խնչո՞ւ կորսնցուց հուրժն իր այստան ուս:

Կ'ըսեն թէ մահը նինջ մլն է խաղաղ,  
Զայն դիմաւորել նարկ է միւս անվախ.  
Բայց ինչպէ՞ս երբալ անվերջ հանգիստին,  
Կը ուղայ արեւն երբ դեռ գէնիթին:

Տարբեր էր կեանիը զոր երազեցի,  
Տարբեր դէմք իր՝ ցոյց տուած ինծի.  
Ի զուր է սակայն իր դէմ գանզատիլ,  
Ու փախուս փորձել նայուածէն իր ՚իլ:

1986

Գ. ՃԱՐՏԱՐ

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

### ՎԱՐՔ ՄԱՉՏՈՑԻ ԵՒ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Վազուց գիտուած է որ Մաշտոցի Վարքին և Ագաթանգեղոսի Գատմութեան մէջ կը դանուին ուելի քան տասնեակ մը հատուածներ, որոնք համարուած են ընդմիջակութիւններ, փոխագրուած, անյայտ անձի մը ձեռքով. Վարքի բնագրէն Աղամաթնդեղոսի բնագրին։ Այդ հատուածներէն շատերուն մէջ կը նշմարուի դիտում մը Ս. Գրիգոր Լուսաւորիչը Մաշտոցին աւելի գերազանց ցոյց տալու։

Այս յօդուածով պիտի ներկայացնենք ակնարկուած այդ հատուածները, միեւնոյն տաճն օգտագործելով զանոնք՝ առաւելապէս Վարքին և տեղտեղ Ագաթանգեղոսի մէջ կարգ մը ճշգումներ կատարելու համար։ Այդ գործին մէջ մեզի իր գնահատելի նպասար պիտի բրեք Փաքր Կորիւն՝ իր պարունակած արժէքաւոր վկայութիւններով։ Ինչպէս մեր պատմիչներուն գործերէն շատերը, նոյնպէս և Մաշտոցի Վարքը անխաթար ձեռք չեն հասած մեզի։ Հետեւորար այդ գործեան մէջ ժամանակի ընթացքին յառաջացած խոթարումներէն ոմանց սրբագրումավ որոշ շահ մը ձեռք բերած պիտի ըլլոյ Կորիւն Վարդապետի թանկարժէք երկը։

Այսեկ Մաշտոցի Վարքին համար կը գործածենք Գառնիկ Ֆնտզիւանի հրատարակութիւնը (Երևանողէմ, 1930). իբրև Փաքր Կորիւն՝ վենետիկի 1894ի տպագրութիւնը, և Ագաթանգեղոսի համար R. W. Thomsonի կողմէ 1976ին լոյս ընայուած բնագիրը։

Ա. - Վարք Մաշտոցի, տող 1-7

ԶԱՊՔՁԱՆԱԳԵԱՆ աղդին և Հայաստան աշխարհին զատառածապարգեկ գրոյն, եթէ ի՞ր և յորո՞ւմ ժամանակի մատակարարեցաւ, և մ՞րպիսի արամբ այնպիսի նորոգատուր առառածածեցէն չնորհս երեւեցաւ, և վասն նորին լուսաւոր վարդապետութեան և հրեշտակարար կրօնիցն ոռագիրնութեան զմառա ամենավ յիշատակարան առանձին մատենանշան ծաղկեցացանելու։

Ա. - Ագաթանգեղոս, յօդ. 16

ԸՆԹԵՐՁԵԼ զեռըգոմայ ազգիս, ըղ- Հայաստան աշխարհիս զատառածապարգեկ աւետեացն Աւետարանին քարոզելոյ բա- նին կենաց, թէ որպէս կամ զիարդ ըն- կոլոն, և որպիսի արամբ, կամ ո ոք ուստիք, որ զայս նորոգատուր զառաքե- լարար չնորին յանձին ցուցանելով՝ այն- պիսի աստուածային չնորհօք երեւեցաւ։ Եւ վասն նորին լուսաւոր վարդապետութեանն և հրեշտակակրօս վարուցն առա- քինութեան և կարգացն, ազնուական համբերութեանցն չնորհալից մեծազօր նահատակին, որ և խստովզանող Քրի- տոսի գտեալ և վկայ ճշմարտութեան։

Այս երկու հատուածներուն նմանութիւնը ակներկ է, բայց ոչ թէ միջարկու- թիւն ըլլալուն հետեւանքով, այլ արդիւնքն ըլլալով միեւնոյն հեղինակի գրչին։ Յատկապէս դիտելի են Վարքին մէջ գործածուած հրեշտակարար կրօնիցն և Ագա- թանգեղոսի կիրարկած զպառաքելարար չնորին ասութիւնները։ Հմմտ։ նուե հե- թանոսաբար սովորութեանցն (Ագաթ. յօդ. 163). զպառանաբար գազանամտութիւն» (Փաւաստ, Վենետիկ, 1914, էջ 40)։

Բ. - Վարք Մաշտոցի, տող 193-218

Որով առամայն լուսաւորեալ և թե- ւամուխ միջամուխ յաստուածատուր հրա- մանաց հանգամանս, և ամենայն պատ-

Բ. - Ագաթանգեղոս, յօդ. 864, 869

Որով առամայն լուսաւորեալ և թե- ւակիս թեամուխ եղեալ աստուածատուր հրամանացն ի հանգամանս, և ամենայն

բաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն,

Եւ յետ այնորիկ, ըստ աւետարաննական չափուցն ի ծառայութիւն Աստուծոյ մորդասիրին դարձեալ, Մերկացեալ այնուհետև զնեթանուակիր ցանկութիւնսն, և առեալ զնշան պարծանաց խաչին յանձն իւր, և երթեալ զնի տմենակիցոյց խաչելոյն հանձնէր ըզնրամանացն պայման՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խոռոշէր, և անդէն վազզվազակի ի միայնակեցական կարգ ժտանէր: Բառզում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ Աւետարանին կրէր, ամենայն կրթութեամբ ամենայն իրաց հոգեորշոցն զանձն տուեալ, միայնաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ, և բանջարանշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեսա և գետասարած անկողնոց, Եւ բազում անգամ զնեշտական հանդիսա գիշերոյն և զնարկ քնոյ յունաւոր տքնութեան ի թօթափել ական վճարէր: Եւ զայս ամեն ոյն առնէր ո՛չ սակաւ ժամանակս: Եւ գտեալ ևս զոժանս յինքն յարհցուցանէր՝ աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան: Եւ այնպէս ամենայն փօրձաւութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ և նովիլիք լուսաւորեալ Եւ պայծառացեալ, ծանօթական և հանոյ լինէր Աստուծոյ և մարդկան:

Այս ազգերը աւելի լու կը պատշաճին Մաշտոցին, քան Լուսաւորչին և Արիստակէսին:

Գ. - Վարք Մաշտոցի, առզ 368-420

Յայնժամ վազվազակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կազմանան Մարաց, որք ո՛չ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւազութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին դժուարամասուցք էին, առ ի յարդարէլ և զնոսա հարանց ամացն [հարանցամոյն զ] ծնունդս, առեալ պարզաբանու՝ հաւատորաբանս, կրթեալս սատաւածատուր իմաստութեանն ծանօթականցուցանէին: Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօքն օրինապատամացն, մինչեւ բնաւ արտաքսյ իւրեանց բնականութեանն զերծանել:

պատրաստութեամբ զանձն յարդարեալ, և ըստ աւետարանական չափուցն ի ծառայութիւն Աստուծոյ մորդասիրին դարձեալ, Մերկացեալ այնուհետև զնեթանուակիր ցանկութիւնսն, և առեալ զնշան պարծանաց խաչին յանձն իւր, և երթեալ զնի տմենակիցոյց խաչելոյն հանձնէր ըզնրամանացն պայման, զնի խաչակիր գընդգին Քրիստոսի աշակերտելոյն հետեւեալ:

Արիստակէս, որ ի ժանկութեան ըստ աստուածագործ ծառայութեան անհեալ էր, որ ի միայնակեցաց լեռնակեցաց ի կրօնամտեալ էր, և բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ Աւետարանին կրեալ ամենայն կրթութեամբ, և ամենայն իրաց հոգեորշաց զանձն տուեալ: Միայնաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարանակակ հենաց, արգելանաց անլուսից, խարազնազգեսա և գետասարած անկողնոց, հանդիսա գիշերոյն և զնարկնազգեսա և գետանատարած անկողնոց, և բազում անգամ զնեշտական հանդիսա գիշերոյն, զնարկ քնոյ, յունաւոր ամենութեան ի թօթափել տկան վճարէր, և զայս արարեալ և անդէն ամենութեան: Եւ գտեալ ևս զոյս ամենայն փորձութեամբ տարեալ և նովիլիք լուսաւորեալ Եւ պայծառացեալ, ծանօթական և հանոյ եղեալ առաջի Աստուծոյ և ամենայն մարդկան:

Գ. - Ագաթանզեղոս, յօդ. 789, 893-896, 854, 775-776

Ապա փութացեալ հասանէր ի գաւառն Դիրջան, զի և անդ յառաջացի լնուէ զառաքելական քարոզութեանն զարուեամ շակութեանն երկովք, և զերծուցանել զնոս ի գարշելի գիւցական սատանայակիր բարուցն ճիւազութեանէ, զխուժադուժ կողմանսն աշակերտելով, զիուշորագոյն և զիեցբեկագոյն բարու հեթանութեան աստուածուուցք շրջել ի զջաստութիւն աստուածուուցք կամատութեանն և ծանօթակ աւետարանական աւետարանցն յարդարեալս ընդելացուցանէր (789):

Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ առաւածաբործ մշակութեամբ զաւետարանական արևուեստն ի թարգմանել, ի գրել և յօւսուցանել, մանուանդ հայեցեալ ի տեառանաբարբառ հրամանացն բարձրութիւն որ առ երանելին Մովսէս եկեղական ամենայն իրացն եղելոց՝ յասուածծեցէն պատգամոցն բարձրութիւն տառնդեցոց՝ մատենագրել առ ի պահեստ յաւբեանցն որ գալոց էին. նոյնպիսիք և այլոց մարգարելիցն հրամայեալք: Ալ՛ո, ասէ, քարտէց նոր մեծ և գրեալ ի նմագրչաւ ի պահանջակի, և ի գիրո հաստահաւ: Իսկ Դաւիթ յայտնապէս ևս վասն ամենայն ազգաց զգիճակ աստուածատուր օրինացն նշանակէ ասելովն, թէ «Դրեսոց յազգ այլ»: Չոր եկեղակ կատարեաց ամենափրկն Քրիստոս շնորհատուր հրամանաւն, իթէ «Ելէք ընդ ամենայն արեգերօս: Ուստի և երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ, յօւսուից փութով և երեկի արդիւնակատար զիւրեանց մշակութիւնն ցուցանեն:

